

Թիւք, Դ, 9), այլ եւ երբ սա եզակի էր (Ես. 2, 6): Այս պարագայն կարծեմ արդիւնք է գործուոյս կազմութեան, որ ունէր կրկին բազկներ՝ նման արցանի, կամ մէկ ծայրէն յարած իրարու (Դար. Բ, 1240):

Ակիշ: Յիշուած միջին դարուն (Վաստ. 213), եւ այս անուամբ դեռ մնացած ի Հայաստան, է ճանկաւոր գործի մը, կրակարանը կամ թոնիրը խառնելու սահմանուած՝ ինչպէս այժմ եւ անցելոյն մէջ: Եւ տաքացնելով՝ — ուրեմն յառաջ ալ երկաթեայ էր՝ — կը գործածուէր ուրիշ ծառայութեանց եւս (անդ):

Կասկարայք: Հոմանիշ ἐσχάραιն (Ղեւտ. Բ, 7. Բ Մնց. Դ, 11) ըստ երկրորդ նշանակութեան (Վիգ. Գ, 350-1), եւ թարգմանող ուրիշ երկու բառերու եւս¹ (Ղեւտ. ԺԱ, 35. Բ Մնց. Դ, 16), լծորդ է ասոր. կասկրա բառին՝ (որ է սակառ. Հիւրշ. 306), զոր Մնացորդաց առաջին թարգմանութիւնը կը կոչէ հրառանդ (Հին Մնց. Բ, Դ, 16), իբրեւ աւանդող հրոյ: Իւր ձեւն յայտնի է արեւմտեայց քով՝ երկաթեայ գուգահեռական եւ մերթ խաչածեւ ձողեւ

1. Ազոնց իմաստով կ'ըսէ Վարդան. «կասկար է (կամ իմանալի է նաեւ) պոռտոռնի պղնձի՝ յորժամ այնու կազմիցի» (անդ, Ա). եւ զոր կը կրկնէ Տաթեւացին ալ. «կասկարայ՝ է պոռտոռնի պղնձի» (Հրց. 357):